

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE OF HISTORY

DEPARTMENT OF ANCIENT HISTORY



«ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ»

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

10-Ը ՀՈՒՆԻՍԻ

ԵՐԵՎԱՆ 2025

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ԾՐԱԳԻՐ

“SYMBOLS AND ICONOGRAPHY OF ANCIENT ARMENIA”

INTERNATIONAL WORKSHOP

10 JUNE

YEREVAN 2025

WORKSHOP PROGRAM

Գիտաժողովի անցկացման վայրը՝

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ
(Մարշալ Բաղրամյան պող., 24/4)

Workshop venue:

Conference hall of the Institute of History of NAS RA
(24 /4 Marshall Baghramyan Ave.)

Աշխատաժողովի աշխատանքային լեզուներն են՝ հայերենը և անգլերենը
Անգլերեն զեկույցները թարգմանվելու են հայերեն
(*թարգմանիչ՝ Հարություն Խուդանյան*)

The working languages of the workshop are Armenian and English.
Reports presented in English will be translated into Armenian
(*Translator: Harutyun Khudanyan*)

10:30 Բացման խոսք

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. դ., պրոֆ. Կարեն Խաչատրյան

10:40 Ողջունի խոսք

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչ՝

Միքայել Բադալյան

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

Նիստավարներ՝ Գոհար Վարդումյան, Ռոբերտո Դան

10:45

Կարեն Թոխաթյան (ՊԻ)

Հայաստանի ժայռապատկերների գաղափարագրերը եվ դրանց հարատևումը միջնադարում

11:05

Վիկտորյա Վասիլյան (ՀԱԻ)

Մայրության պատկերագրությունը Հին Հայաստանում

11:30

Հասմիկ Միմոնյան (ՀԱԻ), Մաթեոս Իսկրա (ԼՄՀԿ), Տիգրան Զաքյան («Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ), Մաչեյ Սոբչակ (ԼՄՀԿ), Պատրիկ Օկրայեկ (ԼՄՀԿ)

Դավթի Բլուրի աճյունասավորներ պարունակող նորահայտ դամբարանադաշտի խեցանոթների վրա ստկա դաջագարդ կնքադրոշմները

11:50

Միքայել Բադալյան (ՊԻ)

Եռանկյունիներով կերտելով տիեզերքը

12:10

Վահե Սարգսյան (ՊԻ)

Հայկական լեռնաշխարհի ասուրերեն արձանագրություններն՝ ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունների

12:30-13:00

Սուրճի ընդմիջում

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Նիստավարներ՝ Միքայել Բադալյան, Մաթեոշ Իսկրա

13:00

Գոհար Վարդումյան (ՊԻ)

Ծիսապաշտամունքային կերպարները Հին Հայաստանի պատկերազրական մշակույթում

13:20

Ռոբերտո Դան (ISMEO), Աննարիտա Ս. Բոնֆանտի (ISMEO), Ա. Չեսարետտո (ISMEO)

Տեսողական երկխոսություններ երկաթի դարում. ընդհանուր խորհրդանշական լեզուն Ուրարտուի և Փոյուզիայի միջև

13:40

Հարություն Խուդանյան (ՊԻ)

*Վերին Տիգրիսի ավազանի հնագույն խորհրդանշանների արտացոլումը
«Մասունցի Դավիթ» էպոսում*

14:00

Դավիթ Վարդապարյան (անկախ հետազոտող)

*Դարանիի սեպագիր արձանագրությունը. պատմական կարեւորությունը,
ոչնչացման եվ մասնակի պահպանվելու անհայտ կողմերը, ներկայիս
վիճակն ու վերականգնման հեռանկարները*

14:00-14:40 Քննարկում, արդյունքների ամփոփում

10:30 Opening Speech

Karen Khachatryan, Deputy Director of the Institute of History, NAS RA,
Doctor of Historical Sciences, Professor

10:40 Welcome Address

Mikayel Badalyan, Head of the Department of Ancient History, Institute of
History, NAS RA

SESSION I

Chairs: Gohar Vardumyan, Roberto Dan

10:45

Karen Tokhatyan (IH)

Ideograms of Armenian Petroglyphs and Their Continuity in the Middle Ages

11:05

Viktoria Vasilyan (IAE)

The Iconography of Motherhood in Ancient Armenia

11:30

Hasmik Simonyan (IAE), Mateusz Iskra (PCMA UW), Tigran Zakyan (“Service for the Protection” SNCO), Maciej Sobczak (PCMA UW), Patryk Okrajek (PCMA UW)

Stamp Impressions on Pottery from the Newly Discovered Urnfield Cemetery at Davti Blur

11:50

Mikayel Badalyan (IH)

Shaping the Universe with Triangles

12:10

Vahe Sargsyan (IH)

Assyrian Inscriptions of the Armenian Highland in the Research of C. F. Lehmann-Haupt

12:30–13:00 Coffee Break

SESSION II

Chairs: Mikayel Badalyan, Mateusz Iskra

13:00

Gohar Vardumyan (IH)

Ritual and Cultic Figures in the Iconographic Culture of Ancient Armenia

13:20

Roberto Dan, Annarita S. Bonfanti, A. Cesaretti (ISMEO)

*Visual Dialogues in the Iron Age: The Shared Symbolic Language between
Urartu and Phrygia*

13:40

Harutyun Khudanyan (IH)

*Ancient Symbols of the Upper Tigris Basin Reflected in the Epic of “David of
Sassoun”*

14:00

David Vardazaryan (Independent Researcher)

*The Darani Cuneiform Inscription: Historical Significance, Unknown Aspects
of Destruction (and Partial Survival), Current State and Perspectives for
Restoration*

14:00–14:40

Discussion and Concluding Remarks

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ABBREVIATIONS

ԼՍՀԿ - Լեհաստանի միջերկրածովյան հնագիտության կենտրոն,
Վարշավայի համալսարան

ՀԱԻ-ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

«ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ – ՀՀ ԿԳՄՍ
նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և
պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

ՊԻ – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

IAE OF NAS RA – Institute of Archaeology and Ethnography of the National
Academy of Sciences of the Republic of Armenia

IH OF NAS RA – Institute of History of the National Academy of Sciences of
the Republic of Armenia

PCMA – Polish Centre of Mediterranean Archaeology, University of Warsaw

“SERVICE FOR THE PROTECTION” SNCO – RA MoESCS

“Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-
Reservations” SNCO

ISMEO – Միջերկրածովյան և արևելյան հետազոտությունների
միջազգային ասոցիացիա, Իտալիա

ISMEO – The International Association for Mediterranean and
Oriental Studies

ԹԵԶԻՍՆԵՐ ABSTRACTS

ԿԱՐԵՆ ԹՈՒԱԹՅԱՆ
(ՊԻ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՐԱՏԵՎՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Ժայռապատկերները վաղնջական անցյալի իրականության պատկերագրական արտացոլումներ են, պատմամշակութային հավաստի սկզբնաղբյուր, և, որպես հաղորդակցության միջոց ապահովել են սերունդների կապը, կենսափորձի, մտածելակերպի և մշակույթի անխզելիությունը:

Դրանցում առանձակի են խորհրդանշանները: Հիմնականում մեկուսի, պարզ նշաններ են, որոնց տարբեր համակցումներով կազմվել են և բարդերը: Երբեմն դրոշմված են որևէ իրողություն ցուցադրող ժայռապատկերի ընդհանուր հորինվածքում: Բնական է համարել, որ որոշակի նշանակություն ու դեր են ունեցել, արվել են սյուժեի լրացման, ևս մի իմաստ կամ նրբերանգ ավելացնելու նպատակով: Ուստի, հարկ է ընդունել դրանց գաղափարագիր, որոշիչ (դետերմինատիվ) լինելը: Սա կարևոր է տվյալ ժայռապատկերի գործառույթի և իմաստաբանության ըմբռնման համար:

Տառանման նշաններ ևս առկա են ժայռափորագիր խորհրդանշանների ծիրում: Սրանք իմաստը դեռևս անհայտ է, պարզ է միայն, որ իրական տառ՝ գրավոր խոսքի կազմատարր կամ հնչույթի գրանշան չեն, որոնցով բառ կգրվեր:

Ակոսանշանը նույնպես կարող է համարվել նշանագրի մի տեսակ: Մեծ Հայքի ավելի քան 25 հնավայրում հայտնի է գրեթե 150 կոթող: Հիմնականում բրոնզ-երկաթիդարյան ամրոցներում են, գետնատարած քարամակերեսի կամ մեծ ժայռաբեկորի վրա:

Քրիստոնեության օրոք հնագույն խորհրդանշանները հարատևել են ձեռագրերում: Կազմվել են «Նշանագիրք իմաստնոց» կոչված հատուկ ցանկեր՝ ամեն մի նշանի բացատրությամբ:

Վարպետանշանը ևս աղերսվում է նշանագրերին: Սկիզբ են առել

դեռևս IV դ., հավանաբար որպես հեղինակության և աշխատանքի հաշվառման ձև: Լինում են տառային և երկրաչափական:

Ժայռապատկերներում առկա խորհրդանշանների ուսումնասիրությունն ունակ է լույս սփռելու մարդկային մտածողության, խոսքի և գրի ծագման, դրանց հաջորդականության ու համաժամանակության խնդիրներում:

KAREN TOKHATYAN
(IH)

IDEOGRAMS OF ARMENIAN PETROGLYPHS AND THEIR CONTINUITY IN THE MIDDLE AGES

Petroglyphs are iconographic reflections of ancient reality. As reliable historical and cultural primary sources, they also functioned as a medium of communication, ensuring the transmission of life experience, mentality, and cultural values across generations.

The symbols found in these carvings are distinctive. Typically isolated and simple, they often appear in various combinations, forming more complex signs. Occasionally, they are incorporated into the broader composition of a petroglyph that depicts a particular scene or concept. It is reasonable to assume that these symbols held specific meaning and purpose – complementing the scene, introducing additional nuance, or enriching the semantic content. As such, they may be considered ideographic or determinative in nature, which is vital to understanding both the function and the semantics of the given petroglyph.

Among the carved symbols are **letter-like signs**, whose meaning remains unknown. It is clear, however, that they do not represent letters or phonetic symbols forming part of a written language.

Another notable symbol is the **groove sign**, which may be considered a distinct type within the corpus. Nearly 150 such monuments are known from over 25 ancient sites throughout Great Armenia. These signs are predominantly found on Bronze and Iron Age fortress walls, typically carved into ground-level stone blocks or large natural rocks.

With the advent of Christianity, ancient symbols were preserved and transmitted through manuscripts. Special compilations, known as “**Nshanagirk imastnots**” (“Symbols of the Wise”), were created, in which each sign was accompanied by an explanation of its meaning.

Of particular interest are the **master signs**, which may be seen as a continuation of symbolic practice. Emerging as early as the 4th c., AD, they likely served to denote authorship, or craftsmanship. These signs take the form of both letters and geometric motifs.

The study of symbols in petroglyphs is of considerable importance for exploring fundamental questions about the development of human cognition, the origins of language and writing, and the relationship between their emergence and chronological evolution.

ԳՈՀԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
(ՊԻ)

ԾԻՍԱՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հայաստանի պատկերագրական մշակույթում ծիսապաշտամունքային կերպարները տարաբնույթ արտեֆակտների տեսքով մեզ են հասել հնագույն ժամանակներից: Դրանցից քննության են առնվում մի շարք ոլորտների նմուշներ.

ա/ ժայռապատկերներ, որոնցում առկա են առասպելաբանական արարածների, ոգիների նկարներ, որոնք մարդու հավատալիքներում և ծիսական կյանքում որոշակի դեր են ունեցել,

բ/ վիշապ քարակոթողներ՝ որպես տարերքի և երկրագործական պաշտամունքի քարեղեն մարմնավորումներ,

գ/ խեցեղեն իրեր, կնիք, զարդեղեն՝ պաշտամունքային պատկերներով,

դ/ ուրարտական որմնանկարներ, դիցերի և դիցուհիների քանդակային պատկերներ, բրոնզե գոտիներ, թիթեղներ, զինական իրեր՝ պաշտամունքային բովանդակության դրվագներով,

ե/ Երվանդունի-Արտաշիսյան դարաշրջանների դիցարանի աստվածների և աստվածուհիների անդրիներ, հարթաքանդակներ, խճանկարներ, քառակողմ կոթողներ,

զ/ դրամներ՝ դիցարանական պատկերներով,

Միջնադարում վերապրուկային դրսևորումներ են դիտվում՝ ըստ տեսքի, ոճի, տեխնիկայի և արտահայտած իմաստի: Խորհրդանշ տարբերը հարատևել են կոթողների և իրերի ձևերում ու նախշերում, որմնանկարի, մանրանկարի և գորգի հորինվածքում: Ազգագրական իրականության մեջ պահպանվել են կերպարներ, որոնք հնագույն ծիսապաշտամունքային կյանքի հետագա արձագանքներ են:

GOHAR VARDUMYAN
(IH)

RITUAL AND CULTIC FIGURES IN THE ICONOGRAPHIC CULTURE OF ANCIENT ARMENIA

In the iconographic culture of Armenia, ritual and cultic imagery has been preserved in the form of diverse artefacts dating back to antiquity. A number of representative examples from various spheres are examined in this context:

- a) **Petroglyphs**, which depict mythological beings and spirits that played a significant role in the belief systems and ritual practices of ancient communities;
- b) **Dragon-stone monuments**, serving as lithic representations of the natural elements and agrarian cults;
- c) **Ceramics, seals, and jewellery** bearing cultic motifs;
- d) **Urartian frescoes**, sculptural representations of deities, bronze belts and plaques, and military artefacts containing scenes of cultic significance;
- e) **Statuary of deities** from the Yervanduni and Artaxiad periods, including bas-reliefs, mosaics, and quadrilateral monuments;
- f) **Coins** adorned with mythological iconography.

In the medieval period, elements of continuity can be discerned in appearance, style, technique, and symbolic content. Vestiges of ancient

symbolism persisted in the forms and decorative motifs of architectural monuments and artefacts, as well as in the compositional structures of mural paintings, manuscript illuminations, and woven carpets. Furthermore, within the ethnographic record, visual motifs survive that may be interpreted as distant echoes of archaic ritual traditions.

ՄԻՔԱՅԵԼ ԲԱԴԱԼՅԱՆ (ՊԻ)

ԵՌԱՆԿՅՈՒՆԻՆԵՐՈՎ ԿԵՐՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԸ

Հին Հայաստանի հոգևոր համակարգերում և ընկալումներում կարևոր նշանակություն են ունեցել եռանկյունիները: Դրանք կարելի է հանդիպել ժայռապատկերներում, տարատեսակ խեցեղեն անոթների վրա, գոտիներին դրվագված տարբեր տեսարաններում: Բացի այն, որ եռանկյունիները խորհրդանշել են արական և իգական սկզբնավորումները, դրանք, ամենայն հավանականությամբ, ներկայացրել են մարդու, կենդանու երկբնույթ էությունը, դրա հակադրումն ու միասնությունը:

Եռանկյունիներով նաև կերտվել է տիեզերքն իր տարբեր «էություններով» ամբողջացող Կենաց ծառն ու Մարդը: Այս առումով, ուշագրավ են Շիրակավանից հայտնաբերված գոտու տարբեր դրվագաշարեր, որտեղ պատկերված են երկու շնագզիներ, որոնք կարծես թե պահպանում են եռանկյունիների համակցումից բաղկացած Կենաց ծառը: Հետաքրքիր է, որ այդ Կենաց ծառի մոդելը կարծես թե իր զուգահեռներ է աղերսում մի շարք խաչքարերի, հրեական Կաբալայի Կենաց ծառի՝ Սեֆիրոտի, ինչպես նաև՝ նմանատիպ այլ համակարգերի հետ:

Վերը հիշատակված Կենաց ծառը, ըստ երևույթին, առանցքային նշանակություն է ունեցել Հայկական լեռնաշխարհի Էթիունի համադաշնության և նրա մշակույթն ու գաղափարախոսությունը կրողների հոգևոր համակարգերում:

MIKAYEL BADALYAN
(IH)

SHAPING THE UNIVERSE WITH TRIANGLES

In the ancient spiritual systems and worldviews of Armenia, triangles held profound significance. They appear in petroglyphs, on various ceramic vessels, and in scenes engraved on belts. Beyond symbolizing masculine and feminine principles, triangles likely represented the dual nature of humans and animals – their oppositions and unity.

Triangles were also used to symbolically construct the universe, including the Tree of Life and the Man itself, incorporating various “essences” of existence. In this context, the belt discovered in Shirakavan is particularly notable. It features a series of engraved scenes showing two canine-like figures seemingly guarding the Tree of Life, which is composed of a combination of triangles. Interestingly, this model of the Tree of Life appears to draw parallels with several khachkars (Armenian cross-stones), the Kabbalistic Tree of Life (the Sephiroth), and similar symbolic systems.

This Tree of Life, as mentioned above, seems to have played a central role in the spiritual beliefs of the Etiuni confederation of the Armenian Highlands, as well as among those who carried its culture and ideology.

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ
(ՊԻ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՍՈՒՐԵՐԵՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ՝ ԸՍՏ

Կ. Ֆ. ԼԵՄԱՆ-ՀԱՌԻՊՏԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Գերմանացի նշանավոր արեւելագետ Կ.Ֆ. Լեման-Հաուպտը (1861-1938թթ.) 1898–1899 թթ. Հայկական լեռնաշխարհում եւ Հյուսիսային Միջագետքում Վ. Բելքի հետ իրագործած իր ճանապարհորդության ժամանակ հետազոտեց նաեւ Տիգրիսի թունելը, որի մասին մինչ այդ առկա էին հպանցիկ վկայություններ: Ըստ հետազոտողի՝ վայրն այս արքաներն Աստ-

րեստանի համարել են որպես Տիգրիսի ակունքը, կամ՝ ակունքներից մեկը եւ իրենց արշավանքների ժամանակ ձգտել են հասնել այնտեղ: Դա հավանաբար պայմանավորված էր նաեւ այն հանգամանքով, որ Ասորեստանի մայրաքաղաքներ Աշշուրի, Կալախի եւ Նինվեի «պատերը ողողող» Տիգրիս գետի ջրերը, այստեղ հոսում էին ժայռերի միջից: Զոհաբերությունները որոնք, ասորեստանյան արքաներն, ըստ արձանագրությունների, կատարում էին իրենց աստվածների պատվին, համարվել են նաեւ նվիրված գետի եւ աղբյուրի աստծուն:

Կ.Ֆ. Լեման-Հաուպտն իր հետազոտություններով փաստեց, որ Տիգրիսի թունելում գտնվում են միայն ասորեստանյան արքաներ Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1114-1076 թթ.) եւ Սալմանասար III-ի (Ք.ա. 858-824 թթ.) արձանագրությունները, արքաների պատկերներով: Ասորեստանյան արձանագրություններում հիշատակվող Սուբնատ գետը, որը թյուրիմացաբար, նույնացվում էր Արեւմտյան Տիգրիսի վտակ Զիբենեի հետ, հետազոտողն իրավացիորեն տեղորոշեց Հյուսիսային Միջագետքում: Նրա արշավախմբին հաջողվեց նաեւ գտնել Թիգլաթպալասար I-ի արձանագրությունը Մանազկերտի մոտ, որի շնորհիվ նաեւ փաստարկվեց ասորեստանյան բանակի արշավանքի երթուղին: Ուշագրավ է, որ Կ.Ֆ. Լեման-Հաուպտն առաջին հետազոտողն է, ով ենթադրեց, որ Տիգրիսի ակունքները եղել են սրբազան վայր եւ վկայված են անգամ «Գիլգամեշ» էպոսում: Միզագային սրբավայրի նշանակություն ունեցող Տիգրիսի թունելի վերաբերյալ վկայություններ առկա են անգամ Խեդամմուի առասպելում. գահազրկված Կումարբին, աստվածներից աննկատ մնալու համար, ապաստանել էր այստեղ՝ անցնելով «գետի տակ, հողի տակ»: Վերոհիշյալ հանգամանքներով է հավանաբար պայմանավորված այստեղ Ասորեստանի արքաների պատկերներ եւ արձանագրություններ կերտելը, իրենց մասին հիշողության՝ բանավոր եւ գրավոր հիշողության ամրագրումը սրբազան լանդշաֆտում:

**ASSYRIAN INSCRIPTIONS OF THE ARMENIAN HIGHLAND IN THE
RESEARCH OF C. F. LEHMANN-HAUPT**

The distinguished German orientalist Karl Friedrich Lehmann-Haupt (1861–1938), during his expedition across the Armenian Highlands and Northern Mesopotamia in 1898–1899 alongside W. Belck, conducted a thorough examination of the so-called Tigris Tunnel – a site hitherto known only from sparse and incidental references. According to Lehmann-Haupt, the Assyrian kings regarded this location as either the principal or one of the principal sources of the River Tigris. It appears that the Assyrian monarchs deliberately sought to reach this sacred source during their campaigns, likely owing to the symbolic and ritual significance of the Tigris, whose waters “washed the walls” of the great Assyrian capitals – Ashur, Calah, and Nineveh, as they coursed through the surrounding rock formations.

The sacrifices offered by the Assyrian kings, as recorded in the inscriptions, were presumably also dedicated to the deity of the river and its spring. Through his research, Lehmann-Haupt demonstrated that only the inscriptions of Tiglath-Pileser I (1114–1076 BC) and Shalmaneser III (858–824 BC), accompanied by royal imagery, are to be found within the Tigris Tunnel. The Subnat River, mentioned in several Assyrian inscriptions and previously misidentified with the Zibene – a tributary of the western Tigris – was correctly located by Lehmann-Haupt in the region of Northern Mesopotamia.

His expedition also succeeded in identifying an inscription of Tiglath-Pileser I near Manazkert (Manzikert), thereby providing crucial evidence regarding the trajectory of Assyrian military campaigns in the region. Significantly, Lehmann-Haupt was the first to suggest that the sources of the Tigris were regarded as a sacred locus – a hypothesis corroborated by their mention in the Epic of Gilgamesh. Further mythological validation may be found in the tale of Hedammu, in which the dethroned god Kumarbi seeks to evade the wrath of the gods by fleeing “beneath the river, beneath the earth,” presumably into the Tigris Tunnel.

These considerations likely account for the creation of royal reliefs and inscriptions at this site – an enduring commemoration of the kings within a sanctified landscape, preserving their memory in both oral tradition and written record.

ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ (ԱՆԿԱԽ ՀԵՏԱԶՈՏՈՂ)

ԴԱՐԱՆԻ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՉՆՉԱՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՎԵԼՈՒ ԱՆՀԱՅՏ ԿՈՂՄԵՐԸ, ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Դարանիի սեպագիր արձանագրության մասին սույն զեկուցումը անդրադառնում է այս հուշարձանին առնչվող ընդամենը մի քանի հիմնական թեմաների՝ ըստ նույն հետազոտողի կողմից առավել ծավալուն ուսումնասիրության (2022-ի հունիսից ի վեր):

Մասնավորապես, անդրադարձ է կատարվում խնդրո առարկա հուշարձանի համառոտ պատմությանը՝ շեշտադրելով դրա պատմական նշանակությունն ու դերը՝ Հայաստանի ուրարտական ժառանգության վերարժևորման ու հանրահռչակման գործում:

Հարկ է նշել, որ Դարանիի արձանագրությունը առաջին ուրարտական սեպագիրն է, որ հայտնաբերվել է ներկայիս Հայաստանի Հանրապետության (Ժամանակին նաև ամբողջ Ռուսական Կայսրության) տարածքում և նախկինում երբևէ այս համատեքստում չի դիտարկվել:

Մեկ այլ առանցքային հարց է հուշարձանի ոչնչացման (և մասնակի պահպանվելու)՝ նախկինում չուսումնասիրված թեման՝ հիմնված արխիվային փաստաթղթերի, դաշտային աշխատանքի նյութերի վրա, ինչը, մեր կարծիքով, թույլ է տալիս առաջարկել ոչնչացման թերևս առավել ճշգրիտ ժամանակը: Այս ամենին հետամուտ լինելը իր նպաստն է բերում այս եզակի հուշարձանի պատմության թեպետ աչքաթող արված, սակայն խիստ կարևոր այս կողմի վրա: Այս հանգամանքը թերևս կարևոր է նաև հուշարձանի վերականգնման գաղափարի առումով:

Ոչ միայն հուշարձանի հնարավոր վերականգնման գաղափարը, այլև դրան միտված ծրագրերը, այդ ուղղությամբ կատարված աշխատանքն ու շատ կոնկրետ առաջարկության անհրաժեշտությունը իր

հերթին ցավալիորեն բխում է ժամանակին գրեթե ամբողջությամբ ոչնչացված հուշարձանի մի բեկորի ներկայիս մտահոգիչ վիճակից ու ներկայումս դրան ցուցաբերված վերաբերմունքից, երբ ժամանակին փրկված բեկորը այժմ նորից իր գոյությունը պահելու ու ըստ պատճաշի թանգարանային ցուցադրության արժանանանալու պայքարի է մատնված:

DAVIT P. VARDAZARIAN
(INDEPENDENT RESEARCHER)

**THE DARANI CUNEIFORM INSCRIPTION: HISTORICAL SIGNIFICANCE,
UNKNOWN ASPECTS OF DESTRUCTION (AND PARTIAL SURVIVAL),
CURRENT STATE AND PERSPECTIVES FOR RESTORATION**

Current presentation on the Darani cuneiform inscription covers just some key topics pertaining this monument, and is based on broader research by the same independent researcher (since June, 2022 and ongoing.)

The following aspects related to the monument in question are being touched upon in this very presentation:

- brief recounting of the history of the monument, focusing on the historical significance and its possible role, as a “fresher piece”, in the re-evaluation and popularization of the Urartian heritage of Armenia.

This shall particularly be stressed, as the Darani inscription is the first ever Urartian cuneiform inscription uncovered in the current territory of the Republic of Armenia (back then also in the territory of the Russian Empire) and never before mentioned and approached from this perspective.

- Another key focus is the previously unexplored history of the destruction (and partial survival) of the monument, backed with archival documents, field research material, allowing to offer perhaps the most exact timing of destruction (at the moment and so far.) This pursuit adds to previously overlooked, yet important aspect of the history behind this unique monument, which is deemed important also in the light of the idea of its restoration.

- Not only the mere idea, but also plans, work in this direction and very concrete proposal for restoration, in their turn, are, sadly, triggered by the very alarming current condition of the once-almost-perished part of the monument, and treatment of it, as the once surviving piece is made to go through new struggle for survival and proper, respectful public exhibition.

The presentation constitutes a unique opportunity to familiarize with archival documents and materials, photographs of Darani inscription not presented anytime previously.

**ՌՈՒԲԵՐՏՈ ՂԱՆ (ISMEO), ԱՆՆԱՐԻՏԱ Ս. ԲՈՆՖԱՆՏԻ (ISMEO),
Ա. ՉԵՍԱՐԵՏՏՏԻ (ISMEO)**

**ՏԵՍՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿԱԹԻ ԴԱՐՈՒՄ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵՎ
ՓՈՅՈՒԳԻԱՅԻ ՄԻՋԵՎ**

Հին Մերձավոր Արևելքի երկաթի դարի քաղաքական լանդշաֆտը հաճախ վերակառուցում են՝ որպես կենտրոն ունենալով ասորեստանյան կայսրությունը, որի արխիվներում ծավալուն վկայություններ են պահպանվել շրջակա քաղաքական միավորումների հետ դրա ունեցած փոխազդեցությունների մասին: Այս շրջանակներում Ուրարտուն և Փոյուզիան հաճախ դիտարկվում են որպես երկրորդական դերակատարներ. մասնավորապես՝ Ուրարտուն որպես Հայկական լեռնաշխարհի մրցակից ուժ, իսկ Փոյուզիան՝ որպես արևմտափոքրասիական թագավորություն, որը երբեմն կապված է հունական աշխարհի հետ: Այսուհանդերձ, տվյալ մոտեցումը հակված է ստվերելու այս երկու մշակութային առումով տարբեր, սակայն տարածաշրջանային առումով նշանակալի միավորների միջև ուղղակի և իմաստալից շփման հնարավորությունը:

Այս զեկուցմամբ առաջարկվում է վերագնահատել Ուրարտուի և Փոյուզիայի միջև փոխհարաբերությունները՝ ընդգծելով նրանց անկախ դերակատարությունը և երկկողմանի փոխազդեցությունները, այլ ոչ թե դրանք դիտարկել զուտ ասուրական կայսրության տեսանկյունից:

Ասորեստանյան տեքստային աղբյուրների և երկու տարածաշրջանների հնագիտական տվյալների համադրմամբ ուսումնասիրության միջոցով վերակառուցվում է պատմական մի համատեքստ, որը լույս է սփռում նրանց քաղաքական կապերի և, ամենակարևորը, նրանց դերի վրա՝ Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 1-ին հազարամյակում խորհրդանշական և տնտեսական ցանցերի ձևավորման գործընթացում:

Այստեղ հատուկ ուշադրություն է դարձվում նյութական մշակույթին (ճարտարապետական ձևեր, պատկերաքանդակներ և խեցեղենի զարդարանքներ), որոնք կարող են բացահայտել ընդհանուր կամ փոխանցվող տեսողական լեզուներ: Այս տարրերը դիտարկվում են ոչ միայն որպես տեղական ինքնության արտահայտություններ, այլև որպես միջմշակութային երկխոսության ցուցանիշներ: Սույն վերլուծությունը ենթադրում է, որ ուրարտա-փոյուգիական հարաբերությունները դիվանագիտական շփումներից և առևտրից այն կողմ են անցել՝ ընդգրկելով ընդհանուր խորհրդանշական արտահայտությունները. այս կապերը վերագնահատելով՝ մենք ձգտում ենք նոր մոտեցումներ առաջարկել մշակութային փոխազդեցության ավելի լայն ցանցում Ուրարտուի դերի վերաբերյալ:

ROBERTO DAN (ISMEO), ANNARITA S. BONFANTI (ISMEO),

ANDREA CESARETTI (ISMEO)

VISUAL DIALOGUES IN THE IRON AGE: THE SHARED SYMBOLIC LANGUAGE BETWEEN URARTU AND PHRYGIA

The Iron Age political landscape of the ancient Near East is often reconstructed with a central focus on the Assyrian Empire, whose archives have preserved extensive records of its interactions with surrounding polities. Within this framework, Urartu and Phrygia are frequently treated as peripheral actors; specifically, Urartu as a rival power on the Armenian Highlands, and Phrygia as a western Anatolian kingdom occasionally linked to the Greek world. However, this perspective tends to obscure the possibility of direct and

meaningful contact between these two culturally distinct yet regionally significant entities.

This presentation proposes a re-evaluation of the relationship between Urartu and Phrygia, emphasizing their independent agency and mutual interactions, rather than viewing them solely through the prism of Assyrian imperialism. By integrating Assyrian textual sources with archaeological data from both regions, the study reconstructs a historical framework that sheds light on their political connections and, importantly, their role in shaping symbolic and economic networks across Anatolia and the Armenian Highlands during the 1st millennium BCE.

Special attention is given here to material culture (architectural forms, iconographic motifs, and pottery decorations) which may reveal shared or transmitted visual languages. These elements are examined not only as expressions of local identity but also as indicators of intercultural dialogue. The analysis suggests that the Urartian-Phrygian relationship extended beyond diplomatic contact and trade, encompassing shared symbolic expressions: by reassessing these connections, we aim to offer new perspectives on Urartu's role within a wider network of cultural interaction.

**ՀԱՍՄԻԿ ՄԻՄՈՆՅԱՆ (ՀԱԻ), ՄԱԹԵՈՒՇ ԻՍԿՐԱ (ԼՍՀԿ),
ՏԻԳՐԱՆ ԶԱՔՅԱՆ («ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՊՈԱԿ), ՄԱՉԵՅ ՍՈԲՉԱԿ (ԼՍՀԿ), ՊԱՏՐԻԿ ՕԿՐԱՅԵԿ (ԼՍՀԿ)**

**ԴԱՎԹԻ ԲԼՈՒՐԻ ԱՃՅՈՒՆԱՍԱՓՈՐՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ՆՈՐԱՀԱՅՏ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ԽԵՑԱՆՈԹՆԵՐԻ ՎՐԱ ԱՌԿԱ
ԴԱԶԱԶԱՐԴ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐԸ**

2024 թ. հոկտեմբերին մեկնարկած հայ-լեհական հնագիտական արշավախմբի առաջին դաշտային սեզոնը նոր շրջան բացեց հին Արգիշտիիսինիլիի արևմտյան հատվածի հետազոտության ասպարեզում: Այս արշավախմբի ամենանշանակալի արդյունքներից էր նախկինում անհայտ աճյունասափորային դամբարանադաշտի հայտնաբերումը Դավթի բլրի արևելյան լանջի ժայռոտ հարթակի վրա (արևմտյան բլուր):

Տեղանքում դաշտային աշխատանքների ընթացքում հայտնաբերված բազմաթիվ նյութերի թվում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում դաջագարդ կնքադրոշմներով խեցեղենի բեկորները: Ընդհանուր առմամբ, 2024 թ. հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվել է վեց նմանատիպ խեցանոթ, ինչպես նաև տարողունակության նշաններով սափոր: Հատկապես ուշագրավ է մի կնքադրոշմ, որում պատկերված է ցորենի հասկ. տվյալ զարդանախշը մի քանի տիպաբանական տարբերակներով հաճախ է հանդիպում Արգիշտիխինիլի կնքադաջված խեցեղենում: Տիպաբանական առումով այս նյութերը թվագրվում են մ.թ.ա. 7-րդ դարի առաջին կեսով:

HASMIK SIMONYAN (IAE), MATEUSZ ISKRA (PCMA UW),
TIGRAN ZAKYAN (“SERVICE FOR THE PROTECTION” SNCO),
MACIEJ SOBCZAK (PCMA UW), PATRYK OKRAJEK (PCMA UW)

STAMP IMPRESSIONS ON POTTERY FROM THE NEWLY DISCOVERED URNFIELD CEMETERY AT DAVTI BLUR

In October 2024, the commencement of the first season of the Armenian-Polish Archaeological Expedition marked a new stage in the investigation of the western sector of the ancient Argištihinili. One of the most significant outcomes of this inaugural campaign was the identification of a previously undocumented urnfield cemetery situated on a rocky platform in the eastern part of the Davti Blur hill (Western hill). Among the numerous artifacts recorded during the fieldwork at this location, particular attention is drawn to fragments of ceramic vessels bearing stamp seal impressions. In total, six vessels with such impressions were found in the 2024 season, alongside a jug inscribed with volume marks. Of special interest within this assemblage is a stamp impression depicting an ear of wheat – a motif frequently encountered in the stamped ceramic repertoire of Argištihinili, where it appears in several distinct variants. Typologically these materials can be dated back to the first half of 7th c. BC.

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերոնշյալ խնդրին կփորձենք անդրադառնալ Հայկական լեռնաշխարհում առկա առաջին պատկերատիպերի ուսումնասիրության միջոցով: Ծննդաբերության, մայրության, մոր եւ մանկան պատկերագրության թեման կփորձենք դիտարկել ժամանակագրական լայն սպեկտրում սկսած պալեոլիթից մինչեւ խրիստոլիթ:

Փոքր Ասիայում տարածված նեոլիթյան «մեծ մոր» կերպարը հանդես էր գալիս որպես անտառների, որսի, բուսականության, կենդանիների հովանավոր աստվածուհի, պտղաբերության եւ ծննդաբերության խորհրդանիշ: Նեոլիթի «մայր հողի» գործառույթին վաղ բրոնզեդարում ավելանում է օջախի՝ որպես ընտանիքի, տոհմի, ինչպես նաեւ սրբազան կենտրոնի պահապանի նշանակությունը:

Պտղաբերության պաշտամունքն արտահայտող կանանց այս արձանիկները, անձնավորելով բնության ստեղծագործ արարող ուժերը, զարթոնքն ու վերածնունդը, պահպանում էին իրենց կապը մեռնող ու հարություն առնող աստվածների հետ: Բրոնզեդարյան բազմապիսի քարոկոփ եւ կավե արձանիկ կուռքերը խորհրդանշում են Առաջավոր եւ Փոքր Ասիայում, ամբողջ Էգեյան աշխարհում լայնորեն տարածված «երկիր-ծառ-կին» համամարդկային սինկրետիկ պատկերացումը, որը կապված էր բուսական ու կենդանական աշխարհի ծաղկման, նորոգման, վերածնման, ինչպես նաեւ մարդկային սերնդի վերարտադրության հետ:

«Պտղաբերության աստվածուհու ժեստը», «Մոր եւ մանկան» «Մերկ դիցուհու», «Աղորանտի» պատկերագրական տիպերում բերրիության խորհրդանիշների գերակայությունը եւ հենց դրանց կատարման պայմանական հարթաքանդակային ոճը գաղափարապաշտամունքային կանոնի համապատասխան հատկանիշներ էին: Սրա հետ միասին հնագույն քանդակագործները իրենց արձանիկներում միաժամանակ իրական բնորոշներին էին պատկերում, որոնց կերպարներում բազմազան ոգիների եւ աստվածությունների մասին պատկերացումներ էին փոխանցում: Առաջին աստվածությունները կին աստվածուհիների կերպարներով են հանդես գալիս, որպես ծննդաբերողների, արգասավորության, հողի, բուսականության խորհրդանիշ:

Նախապատմական Հայաստանի տարածքից գտնվել են կանանց բազմաթիվ կավից արձանիկներ, որոնց վրա կրծքերն ու սեռական օրգանները որպես աշխարհաստեղծման եւ պտղաբերության խորհրդանիշներ հատուկ ընդգծված են: «Մեծ մոր» երկակի բնույթի

բաժանմամբ ձեւավորվեցին նրա երկու հակադիր՝ բարի եւ չար, դրական եւ բացասական կերպարները եւ պատկերատիպերը: Որսի եւ անասնապահության զարգացմանը զուգահեռ մեծանում է կնոջ դերակատարումը՝ որպէս կենդանիների տիրուհի եւ որսորդության հովանավոր: Հայկական լեռնաշխարհի անձավային նկարչության եւ ժայռապատկերների մեջ բազմաթիվ են նման որսի տեսարանները: Կենդանիների եւ որսի այս հովանավորուհու կերպարն ու պատկերագրությունն էլ այնուհետեւ նախատիպ ծառայեց ռազմի եւ մետաղագործության դիցուհու կերպավորման համար՝ կապված մարտերի, զինագործության զարգացման հետ: Բնական է, որ պետական կազմավորումների կայացմանը զուգահեռ, երբ կարելովում է պատերազմի միջոցով հարուստ ավար ձեռք բերելը, սահմանների համար պայքարը, պետք է աճեր նաեւ կին աստվածության՝ որպէս ռազմի, պատերազմի հովանավորի դերը: Հաճախ պատկերագրության մեջ այս կանացի արձանիկները կրում են նույն ռազմական հանդերձանքը, ինչ արական աստվածությունները:

Այդ գործընթացին զուգահեռ, առեւտրի եւ քաղաքների զարգացումն, իր հերթին, լրացնում է կին աստվածության հատկանիշները նոր՝ առեւտրի հովանավորի գործառույթով: Միրո, գեղեցկության եւ տարփանքի դիցուհու ծագումը, մեր կարծիքով, նույն պէս, կապված էր դասակարգային հասարակարգի ձեւավորման հետ:

VIKTORIA VASILYAN
(IAE)

THE ICONOGRAPHY OF MOTHERHOOD IN ANCIENT ARMENIA

This paper aims to address the subject through an examination of the earliest iconographic types attested in the Armenian Highlands. We shall explore the themes of childbirth, motherhood, and mother-and-child iconography across a broad chronological span – from the Palaeolithic to the Chrysolithic periods.

The Neolithic image of the “Great Mother,” widely diffused in Asia Minor, functioned as the patron goddess of forests, hunting, vegetation, and animals – serving as a symbol of fertility and childbirth. In the Early Bronze Age, the role of this Neolithic “Mother Earth” expanded to include the hearth, becoming the guardian of the family and clan, as well as the sacred centre of the household.

These female figurines, embodying the cult of fertility and personifying the creative forces of nature – awakening and rebirth, retained their connection with myths of dying and resurrecting gods. The diverse stone and clay figurines of the Bronze Age symbolise the universal syncretic concept of the “earth–tree–woman,” which was widespread across Asia Minor and the Aegean world. This archetype was closely linked to the blossoming, renewal, and rebirth of flora and fauna, as well as to the reproduction of the human race.

The “Gesture of the Goddess of Fertility” and the “Mother and Child” motif, as seen in the iconographic types of the “Naked Goddess” and the “Adoranti”, prominently display symbols of fertility. Their conventional bas-relief style conformed to a rigid ideological and cultic canon. Simultaneously, ancient sculptors rendered real figures in their works, through which they conveyed representations of diverse spirits and deities. The earliest divine figures appear as female goddesses, embodying birth, fertility, the earth, and vegetation.

Numerous prehistoric clay figurines of women have been unearthed in Armenia, with an emphasis on breasts and genitalia – symbolizing cosmogenesis and fertility. As the duality of the “Great Mother” became conceptually divided, two opposing aspects emerged: benevolent and malevolent, positive and negative forms and iconographic types. With the advancement of hunting and animal husbandry, the woman’s role as mistress of beasts and protectress of the hunt became increasingly significant. Numerous such hunting scenes are depicted in the parietal art and petroglyphs of the Armenian Highland.

The image and iconography of the patroness of animals and the hunt subsequently served as a prototype for the development of the goddess of war and metalworking, reflecting the evolution of combat and weaponry. Naturally, with the rise of organised polities, where border defence and the acquisition of spoils through conflict became paramount, the role of the female deity as protectress of war gained further importance. Iconographically, these female figures are often represented in the same martial attire as their male counterparts.

Concurrently, the rise of urban centres and the expansion of trade endowed the female deity with an additional function: that of a patroness of commerce. In our view, the emergence of the goddess of love, beauty, and lust was likewise linked to the development of class-based society.

**ՎԵՐԻՆ ՏԻԳՐԻՄԻ ԱՎԱԶԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԻ
ԱՐՏԱՑՈՒՄԸ «ՄԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍՈՒՄ**

«Մասունցի Դավիթ» կամ «Սասնա ծռեր» էպոսը իր պատմական աստատից բացի իրենից ներկայացնում է խորհրդանշանների, նրանց գործառույթների և փոխհարաբերությունների մի ողջ համակարգ, որտեղ անշունչ առարկաները, աշխարհագրական տարածքները, կենդանիները և այլն անձնավորված ու շնչավորված են, անմիջական շփման մեջ են ոչ միայն էպոսի հիմնական, այլև դրվագային կերպարների հետ: Էպոսի գործող անձինք իրենք ևս խորհրդանշաններ ու խորհրդանշական կերպարներ են, որոնց կարծես ի վերուստ որոշակի գործառույթ և նշանակություն է վերապահված էպոսի այս կամ այն դրվագում:

Կարելի է անվերջ թվել այդ խորհրդանշանները՝ Թուր Կեծակին, Քուռկիկ Ջալալին, ոսկե բազբանդը, Կաթնաղբյուրը, Ծովասարը, Մարութա սարը, երկաթե սյունը, Պղնձե քաղաքը, Մհերի դուռը և այլն: Յուրաքանչյուր խորհրդանշան իր հերթին ներկայացնում է մի ողջ պատկերացում, հնագույն հավատալիքների հեռավոր հիշողություն, ինչն արժանի է առանձին ուսումնասիրության: Էպոսում հանդիպող բազում խորհրդանշաններից շատերը հենց տեղածին են. դրանք ներկայացնում են Վերին Տիգրիսի ավազանի կամ հայոց Աղձնիք նահանգի հնագույն հավատալիքներն ու դրանց առնչվող խորհրդանշական առարկաները: Ասուրական աղբյուրներում այս տարածքների համար հիշատակված ամպրոպի աստված Թեշուբի պաշտամունքը և կերպարը միահյուսված է ոչ միայն Սանասարի, այլև նրա հաջորդների հետ, որոնք կրում են միմյանցից ժառանգած միևնույն աստվածապարզ զենքերն ու զրահը, հեծնում միևնույն նժույգը՝ Քուռկիկ Ջալալին:

Բացի այդ, էպոսում ներկայացված խորհրդանշանները կարելի է բաժանել ըստ իրենց ունեցած գործառույթի՝ բարի և չար ուժերին ծառայելուն: Այդպիսով նաև կարելի է դասակարգել դրանք ըստ անտագոնիստական և պրոտոգոնիստական ծագումնաբանության և բնույթի:

THE REPRESENTATION OF ANCIENT SYMBOLS OF THE UPPER TIGRIS BASIN IN THE EPIC “DAVID OF SASSOUN”

Beyond its historical foundations, the epic *David of Sasun* (or *Sasna Tsrer*) embodies a comprehensive symbolic system, encompassing the functions and interrelations of its symbols. In this system, inanimate objects, geographical locations, animals, and other elements are personified and animated, entering into direct interaction not only with the principal figures of the narrative but also with its episodic characters. The protagonists themselves are symbolic entities, endowed with particular functions and meanings, as if designated by a higher order within the episodic framework of the epic.

These symbols are numerous and diverse: Tour Ketsaki (Lightning Sword), Kurkik Jalali (Colt Jalali), the golden armlet, Katnaghbyur, Tsovasar, Mount Maruta, the iron pillar, the Copper City, Mher's Door, and others. Each of these represents an autonomous conceptual unit, evoking distant memories of ancient belief systems – each warranting separate scholarly investigation. Many of the epic's symbols are indigenous, reflecting the ancient religious practices and symbolic artefacts of the Upper Tigris Basin, specifically the Armenian province of Aghdznik.

The cult and imagery of the thunder god Teshub, referenced in Assyrian sources concerning this region, are intricately interwoven not only with the figure of Sanasar, but also with his descendants. These successors inherit divine weapons and armour passed down through generations, and all ride the same mythic steed – Kurkik Jalali.

Furthermore, the symbols found in the epic can be classified according to their function in serving either benevolent or malevolent forces. In this regard, they may be interpreted in terms of their antagonistic or protagonistic nature and origins.